ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Գ. Հուրոյանի (Լիազորագիր տրված՝ 07.02.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1526-19 գրությամբ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 30.01.2019թ. թիվ 01/61-1222 գրության հիման վրա, 05.02.2019թ. թիվ 27/26-3/1526-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արաբկիր-

Կամար» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.02.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 11.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն), ինչի արդյունքում Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն հայտը ներկայացվելուն տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 28 710 800 ՀՀ դրամ է՝ պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից 34 957 500 ՀՀ դրամ, որը հրավերի պահանջներին չի բավարարում:

Գնահատող հանձնաժողովը, 18.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել է և առաջարկել «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը 23.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 21.01.2019թ.-ին ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ին ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից չի շտկվել:

Նույն 1.2 կետի 2-րդ պարբերությամբ, գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի 9-րդ չափաբաժինը հայտարարել է չկայացած:

ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնի գրության համաձայն՝ 2017թ. «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 35 010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34 957 500 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 63-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը,

բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 28 710 800 ՀՀ դրամ է, որը պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից 34 957 500 ՀՀ դրամ, որի արդյունքում «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

30.01.2018թ. «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի կողմից լիազորված փաստաբանը հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ «Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնին»՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ իր վստահորդ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 00039965) 2017թ. ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, այսինքն հայտնել, թե «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00039965) 2017թ. ակտիվները և պարտավորությունները ինչքան են կազմել:

Ի պատասխան վերոնշված փաստաբանական հարցման՝ ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնից ստացվել է պատասխան, որ մասնավորապես՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 35 010 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34 957 500 ՀՀ դրամ:

Վերոգրյալից երևում է, որ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի մոտ հայտը ներկայացնելու (11.12.2018թ.) տարվան (2017թ.) նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս չէ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից: Ի վերջո, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ: Իսկ ինչպես արդեն նշվել է, ՊԵԿ-ի գրությունից ակնհայտ է դառնում, որ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, այսինքն

Ընկերությունը լիովին համապատասխանում է Կարգի 63-րդ կետի «բ» ենթակետի պահանջներին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ՊԵԿ Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնի վկայակոչված գրության պայմաններում, որի համաձայն՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը (35 010 800 ՀՀ դրամ) պակաս չէ պարտավորությունների (34 957 500 ՀՀ դրամ) հանրագումարից, «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված պայմաններում գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ելնելով վերոհիշյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը, փաստական հանգամանքները և «Արաբկիր-Կամար» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/30 ընթացակարգի շրջանակներում 11.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.01.2019թ. թիվ 01/61-1222 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. որոշմամբ 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 14.01.2019թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/30 ընթացակարգի շրջանակներում 11.02.2019թ. ժամը 10:00-ի հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2019/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 11.12.2018թ. հայտ է ներկայացրել «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 28 710 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 34 957 500 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.02.2019թ. թիվ 311 գրության համաձայն՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի 2017թ. ակտիվների հանրագումարը կազմում է 35 010 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34 957 500 ՀՀ դրամ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1526-19 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 30.01.2019թ. թիվ 01/61-1222 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում

չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից

հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 11.12.2018թ. հայտ է ներկայացրել «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ն 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 28 710 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 34 957 500 ՀՀ դրամ:***

Կարգի 47-րդ կետի համաձայն Ընկերությանը 21.01.2019թ. ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.02.2019թ. թիվ 311 գրության համաձայն՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի կողմից 16.04.2018թ. հարկային մարմին է ներկայացվել է 2017թ. շահութահարկի հաշվարկ, համաձայն որի Ընկերության ակտիվների և պարտավորությունների հանրագումարը կազմում է 0 դրամ: Այնուհետև Ընկերության

կողմից 04.09.2018թ. ներկայացվել է 2017թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկ, որի արդյունքում 2017թ. ակտիվների հանրագումարը դարձել է 28 710 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34 957 500 դրամ: 21.01.2019թ. հարկ վճարողի կողմից կրկին վերը նշված հաշվարկը ճշգրտելուց հետո, Ընկերության ակտիվների հանրագումարը դարձել է 35 010 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը մնացել է անփոփոխ՝ 34 957 500 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արաբկիր- Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս է եղել պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից: Ընկերությանը Կարգի 47-րդ կետի համաձայն, ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը սակայն Ընկերության կողմից չի

շտկվել: Միևնույն ժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.02.2019թ. թիվ 311 գրության համաձայն՝ 21.01.2019թ. Ընկերության կողմից 2017թ. շահութահարկի հաշվարկը ճշգրտելուց հետո, Ընկերության ակտիվների հանրագումարը դարձել է 35 010 800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը՝ մնացել է անփոփոխ՝ 34 957 500 ՀՀ դրամ:

Այսպիսով, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով չի շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը, այնուամենայնիվ արձանագրում եմ, որ Ընկերությունը, համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.02.2019թ. թիվ 311 գրության, փաստացի ունի Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ պահանջվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, ուստի մման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1526-19 գրությամբ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**